

Մասնագիտացված կազմակերպությունների կողմից «Անտենային էտալոնների պահպանման և զարգացման ծառայությունների» մատուցման պետական գնման պայմանագրի (<< ԷՆ-ՄԱԾՁԲ-21/28-92-21) համաձայն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունում 2021թ. առաջին եռամսյակում կատարված աշխատանքների

Հաշվետվություն

Կազմվել են 2021թ. նախատեսվող անհրաժեշտ աշխատանքների ցանկ և օրացույցային պլան:

Կատարվել է ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1 և ԳԷՊԻ-2 անտենային համալիրների կազմում գտնվող ռադիո-սարքավորումների նախնական տեխնիկական վիճակի ուսումնասիրություն լաբարատոր պայմաններում. վերացվել են նկատված թերությունները:

Կատարվել են ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1 էտալոնային անտենաների համալիրներում 10սմ հաճախային տիրույթում նոր ԳԲՀ գեներատորին ներկայացվող պահանջները ըստ հզորության և մոդուլյացիայի՝ հաշվի առնելով հաճախային այդ տիրույթում ալիքների հզորության տարածքային կորուստները և առկա լոգարիթմական ընդունիչի զգայնությունը: Ընտրվել է համապատասխան պարամետրերով գեներատոր:

Դիտարկվել են չափման արդյունքների վիճակագրական մշակման նոր մեթոդներ՝ հաշվի առնելով պարազիտային անդրադարձումները՝ գետնի մակերևույթից ապահովելով համապատասխան ծրագրավորմամբ:

Կատարվել են հեռավոր տարածքում անտենայի դաշտի բաշխվածությունների չափման արդյունքներում շտկումներ մտցնելու նոր մեթոդների հետազոտություններ՝ կախված պարազիտային անդրադարձումների մակարդակից: Մշակվում են չափման արդյունքների վիճակագրական մշակման նոր մեթոդներ և համապատասխան ծրագրային ապահովում:

Շարունակվում է մշակվել էտալոնային անտենայի ուժեղացման գործակցի ընտրված չափման մեթոդին համապատասխան կառուցվածքային սխեմա, որը հնարավորություն կտա անտենայի պարամետրերի չափումն իրականացնելիս վերը նշված սխալները հաշվի առնել ղեկավարման ավտոմատ համակարգի միջոցով:

Հիմք ընդունելով «Չափման միջոցը որպես ազգային չափանմուշ ճանաչելու կարգը սահմանելու մասին» որոշման 15-րդ կետում նշված չափանիշները և համեմատելով ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1 և ԳԷՊԻ-2 էտալոնների չափանմուշների հետ՝ տեսնում ենք, որ դրանք չափագիտական և տեխնիկական բնութագրերով համապատասխանում են ազգային ելակետային չափանմուշ ճանաչելու պայմաններին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1 և ԳԷՊԻ-2 էտալոնները ներկայացվել են «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության Գիտխորհրդին՝ ազգային չափանմուշ ճանաչելու համար:

«Ստանդարտացման և
չափագիտության
ազգային մարմին» ՓԲԸ-ի
տնօրենի տեղակալ՝



ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Էտալոնների պահպանման
գիտական բաժնի պետ՝



ՆՈՐԱՅՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ